ԷԼԻԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԶՈՒԳՈՐԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔ՝ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Դեռևս Պլատոնի «Ֆեդոն» և Արիստոտելի «Մարդկային մտքի և հիշողության մասին» աշխատություններում կարելի է տեղեկություններ գտնել մարդու գիտակցության մեջ զուգորդումների առաջացման պատճառների և զուգորդային կապերի մասին: Համաձայն Արիստոտելի՝ զուգորդումները առաջ են գալիս երեք հիմնական սկզբունքով.

1. մտային պատկերները առաջ են բերում իրենց նման այլ մտապատկերներ:
2. հակադրության միջոցով մտապատկերները պատճառ են դառնում այլ մտապատկերների, որոնք էլ իրենց հերթին հակադրվում են նախորդներին:
3. տարածական և ժամանակային առանցքի վրա միմյանց մոտ գտնվող մտապատկերները առաջ են բերում այլ մտապատկերներ, որոնք նախկինում ժամանակի և տարածության առումով մոտ են եղել, կամ անմիջապես հաջորդել են միմյանց:

Նշված սկզբունքները անշուշտ անչափ կարևոր են, սակայն չպետք է մոռանալ նշել, որ բոլոր զուգորդումների հիմքում ընկած են հասարակության ու անհատների կենսական փորձը:

Եվ այս պատկերացումը, որ զուգորդումները անմիջականորեն պայմանավորված են մարդու կենսափորձով, կենտրոնական տեղ է զբաղեցնում բազմաթիվ փորձագետների, հոգեբանների, ինչպես նաև հոգելեզվաբանների աշխատություններում:

Հոգեբանության մեջ զուգորդում ասելով հասկանում են գիտակցության բովանդակությունները, այսպես կոչված իմաստային կապերը: Դրանք դրսևորվում են այն ժամանակ, երբ մի որևէ իմաստի հանդես գալը պատճառ է դառնում մեկ այլ իմաստի երևան գալուն: Ընդ որում, մարդու գիտակցության մեջ այդ իմաստային կապերը կարող են լինել ոչ միայն հասկացական բնույթի, այլ նաև ընկալումներ, պատկերներ, ինչպես նաև զգացողություններ, այլ խոսքով արտալեզվական զուգորդումներ: Արտալեզվական զուգորդումներ ասելով՝ նկատի ունենք այն ռեակցիաները, որոնք ապրվելուց և գիտակցվելուց հետո միայն կարող են լեզվական արտահայտություն ստանալ: Արտալեզվական զուգորդումները հաճախ աղբյուր են ծառայում լեզվում թևավոր խոսքերի, փոխաբերությունների, դարձվածքների համար, քանի որ դրանք վերաբերում

են հոգեհուզական ոլորտին և բնականաբար իրենց դրսևորումն են գտնում ինչպես բառային, այնպես էլ նշանային այլ համակարգերում: Զգայական ընկալումները խոսքային արտահայտություն ստանալու ընթացքում բառի հետ մտնում են պատճառական, կախումային ու վերաբերական բարդ հարաբերությունների մեջ և ենթարկվում խնայողության օրենքին: Այս դեպքում է, որ մենք գործ ենք ունենում ոչ միայն բառի, այլև լեզվական ավելի բարդ արտահայտչամիջոցների (դարձվածք, ասացվածք, այլաբանություն) հետ: Նշված միավորներն իրենց իմաստային կառույցներում կրում են զգայական, պատկերավոր և արտալեզվական զուգորդումներ (օր. լույս – ծակող / կուրացնող): Արտալեզվական զուգորդումները իրացվում են դրդաբառի և վերաբերական առումով ոչ լեզվական արտահայտության միջև: Նման զուգորդումները ոչ միշտ են ենթարկվում լեզվատրամաբանական օրինաչափություններին: Եվ եթե բառազուգորդումները ինչ-որ չափով ուսումնասիրված են, ապա արտալեզվական զուգորդումները մնում են չբացատրված և չդասակարգված: Դրանք համապատասխան են ֆիզիկական ռեակցիաներին: Այս զուգորդումների ձևավորման վերաբերական մեխանիզմների ուսումնասիրությունը կարող է, սակայն, գիտակցության կրողի մասին հետաքրքիր տեղեկություններ տալ: Ահա ինչու զուգորդումը հոգելեզվաբանության ուսումնասիրության առարկաներից մեկն է, որը, սակայն, հոգելեզվաբանության մեջ նաև որպես ուսումնասիրության ու պարզաբանման սկզբունք է կիրառվում: Զուգորդումների սկզբունքը մյուսների հետ միասին կիրառվում է լեզվում նշանակությունների, իմաստների առաջացման, լեզվի յուրացման որոշ երևույթների և խոսքի կառուցման որոշակի օրինաչափությունների բացատրության համար:

Լեզվական նշանի նշանակության առաջացման բացատրության համար առաջին հերթին դիմում ենք երկու երևույթների տարածաժամանակային առումով մոտ գտնվելու սկզբունքին, որը հանգեցնում է այդ երևույթների զուգորդային կապերին: Այսինքն՝ լեզվական նշանը կարող է նշանակություն ձեռք բերել այն դեպքում, եթե այն տարածաժամանակային առանցքի վրա տվյալ իրողության հետ միասին ընկալվի:

Լեզվի յուրացման երևույթի բացատրության համար նույնպես առաջ են քաշվում իրողությունների՝ ժամանակի ու տարածության մեջ միմյանց մոտ գտնվելու հանգամանքը, ինչպես նաև նմանությամբ պայմանավորված զուգորդային կապերի առաջացման սկզբունքը:

Այն մոտեցումը, որ զուգորդումները գիտակցության բովանդակությունների, ուրեմն նաև ազդակների ու ռեակցիաների առաջացման պատճառն են, այսօր փոխարինվել է մեկ այլ մոտեցմամբ, որ զուգորդման երևույթը՝ որպես այդպիսին, լիարժեք պատկերացում չի տալիս գիտակցության կառույցներում

նոր իմաստների, բովանդակությունների առաջացման ու ամրագրման մասին, և որ զուգորդումն ինքը՝ որպես երևույթ, դեռևս լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Ավելի ճիշտ, առաջին մոտեցումը ոչ թե փոխարինվել, այլ լրացվել է երկրորդով: Գալտոնը առաջինն էր, որ սկսեց կանոնավոր զբաղվել բառազուգորդումներով: Նա փորձարկվողներին առաջարկում էր մի շարք դրդաբառեր, որոնց տրվող առաջին ռեակցիաները պետք է գնահատվեին ըստ բովանդակության և դրանց առաջ գալու համար անհրաժեշտ ժամանակի: Այսպիսի փորձը կոչվեց ազատ զուգորդումների գիտափորձ: Ազատ զուգորդումներին հակադրվում են ոչ ազատ զուգորդումները, որի դեպքում փորձարկվողները զուգորդումներ տալիս պետք է գործեն որոշակի պահանջների շրջանակներում:

Ազատ զուգորդումների մեթոդը ընդհանուր հոգեբանության մեջ ծառայում է զուգորդային նորմերի ու օրինաչափությունների ուսումնասիրությանը: Դիֆերենցիալ հոգեբանությունը այդ նորմերի ու օրինաչափությունների սահմաններում փնտրում է հասարակության առանձին խմբերին հատուկ տարբերություններ ու նմանություններ, հոգեթերապիան այս մեթոդը կիրառում է ախտորոշման նպատակներով, իսկ հոգելեզվաբանությանը ազատ զուգորդումների մեթոդը դիտում է որպես գիտակցության, մտածողության մեխանիզմների՝ խոսքով արտահայտելի մասի հետազոտության միջոց:

Գրականություն

1. Аристотель, Сочинения, т.4, М., 1982
2. Galton F., Psychometric experiments, brain, 2, 1979/80
3. Gadenne V., Bewußtsein, Kognition und Gehirn, Bern, 1996
4. Engelkamp J., Psycholinguistik, München, 1974
5. Экспериментальные методы в психолингвистике, М., 1987-1991